



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ՆՈՂԵՄԲԵՐ, 2011

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպոլթիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմասպոլթիւն պբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բապմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 14

ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամփար մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ»,
ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան.
չկայ մէկը որ բարին գործէ:

Տէրը երկինքէն կը նայի մարդոց,
տեսնելու համար թէ կա՛յ արդեօք իմաստուն մարդ մը,
որ Աստուծոյ կը դառնայ:

Ամէնքն ալ խտրորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.
չկայ մէկը որ բարին գործէ. չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելքի պիտի չգա՛ն բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն.
անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս,
եւ Տիրոջ չեն աղօթեր:

Բայց յանկարծակի՝ Տէրը գիրենք ահ ու դողի պիտի մատնէ,
որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Չարագործները աղքատին խորհուրդները կը հեզնեն,
բայց Տէրը ինքն է անոր ապաւենը:

Ո՛հ, տեսնէ՛ի՜ Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Միտնէն պիտի գայ:
Երբ Տէրը ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը,
Յակոբի սերունդները պիտի ցնձան եւ ուրախանան:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխա՛հիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Մեր Տէրը եւ Աստուածը,

հոգիացուր մեր մարմնաւոր խորհուրդները,

գեղեցկացուր մեր սրտէն բոխած անվայելուչ զգացումները.

օգտակար եւ շինիչ դարձուր մեր բերնէն ելած բոլոր խօսքերը.

եւ առաքինութեան պսակով զարդարէ մեր վարմունքներն ու գործերը,
որպէսզի միշտ՝ ամէն բանով՝ մեր կեանքերը ըլլան փառաւորում սուրբ անունիդ,

յաւեր Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին.

այժմ եւ միշտ եւ յաիպեանս յաիպենից: Ամէն:

Յովհաննէս Մկրտիչի մահը (14:1-12)

Քրիստոսի մասին փարբեր կարծիքներ.-

1. Փարիսեցիները կը մերժեն ըսելով, «Չարին իշխանութեամբ կ'ընէ»:
2. Ուրիշներ «նշան մը» կ'ուզեն փեսնել:
3. Ընդհանրական պարագաները խելագարած է կ'ըսէին:
4. Ծննդավայրի մարդիկը կը մերժեն զինքը:
5. Իսկ Հերովդէս կը կարծէ թէ Յովհաննէս Մկրտիչն է յարութիւն առած:

Հերովդէս ծանօթ է իր գեղութեամբ եւ անբարոյ կեանքով:

Ահա արդէն Քրիստոսի համբաւը կը հասնի մինչեւ պալատ: Մա ցոյց կու փայ Աստուծոյ գործունէութեան փարածման վիճակը: Միւս կողմէ, սակայն, այս աշխարհի իշխանները շատ ալ պատրաստ չեն լսելու եւ հասկնալու Աստուծոյ իմաստութիւնը:

Հերովդէսի մտահոգութիւնը:

1. Քրիստոսի համբաւը կը փարածուի քան իր:
2. Վախ, խղճահարութիւն, որովհետեւ Յովհաննէս Մկրտիչի հոգին «եպ վերադարձեր է»:
3. Ան Յովհաննէս Մկրտիչը գլխապելով կարծեց պիտի կրնայ Յովհաննէսի ձայնը լրեցնել, սակայն երբեք ալ չկրցաւ լրեցնել իր խղճի ձայնը:

Յանդիմանութիւնները որպէս բարիք, որպէսզի վերջ դրուին կամ արմատախիլ ըլլան այն չափքները, որոնք օրըստօրէ արմատ կրնան նետել մեր մէջ: